ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Երաժշտական խմբային աշխատանքները որպես համագործակցային ուսուցման կարևոր գործոն

Վերապատրաստվող՝ Արմենուհի Բաղշիկի Գալստյան,
Վերին Արտաշատի «Լուսնթագ» մանկապարտեզի երաժշտության դաստիարակ
Վերապատրոստող՝ մ.գ.թ., դոցենտ Անահիտ Գևորգյան

Երևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3

Երաժշտական խմբային աշխատանքները որպես երեխայի համագործակցային ուսուցման կարևոր գործոն…….…… 4

Եզրակացություն……15

Օգտագործված գրականության ցանկ……...…16

Հավելված

Ներածություն

Նախադպրոցական հիմնարկներում երեխաների երաժշտական դաստիարակության և ուսուցման հիմնական ձևը հանդիսանում է երաժշտական պարապմունքը: Այդ ընթացքում երեխաները ձեռք են բերում երաժշտության ունկնդրման, երգեցողության, երաժշտառիթմական շարժումների, մանկական նվագարաններով նվագելու գիտելիքներ, ունակություններ և հմտություններ: Գիտելիքների նպատակուղղված ուսուցման շնորհիվ խորացվում և ընդլայնվում է նրանց երաժշտական աշխարհայացքը, ձևավորվում են ստեղծագործական ընդունակություններ: Երաժշտական պարապմունքները կարևոր դեր են խաղում երեխաների կամքի,ուշադրության, հիշողության զարգացման համար, օժանդակում դպրոցական ուսուցման նախապատրաստմանը: Դրանցում իրականացվում է յուրաքանչյուր երեխայի պլանավորված ուուցումը՝ միաժամանակ հաշվի առնելով ամեն մեկի անհատական առանձնահատկությունները:

Երաժշտությունը հանդիսանում է այն լայն հնարավորությունը, որի միջոցով իրականացվում է ոչ միայն երեխաների գեղագիտական դաստիարակությունը, այլև այն հնարավորություն է տալիս զարգացնելու երեխաների մտավոր, բարոյական, մարդասիրական, հայրենասիրական դաստիարակությունը, լայն հնարավորություն է ստեղծում ծանոթանալու մեր նախնիների պատմական փորձին: Երաժշտության պարապմունքները, խմբային աշխատանքները նպաստում են երեխաների բազմակողմանի զարգացմանը, օգնում նրանց մտածել, տրամաբանել, կշռադատել, մտքում ստեղծել կերպարներ և համեմատել, հետևել երաժշտության զարգացմանը, նպաստել նաև երեխաների մաթեմատիկական ունակությունների զարգացմանը:

Երաժշտությունը զինում է երեխաներին կայուն և խորը գիտելիքներով, մտածական գործունեության հնարներով, ձևավորում նրանց աշխարհայացքը, զարգացնում մտքի թռիչքը, նրանց մեջ մշակում մտքի լայնություն, խորություն, ճկունություն:

Ընտրելով այս թեման՝ «Երաժշտական խմբային աշխատանքները որպես երեխայի համագործակցային ուսուցման կարևոր գործոն», մենք ցանկանում ենք կարևորել երաժշտության և երաժշտական խմբային աշխատանքների դերը երեխայի համագործակցային ուսուցման գործընթացում: Մեր հետազոտական աշխատանքում առաջարկում ենք կազմակերպել խմբային աշխատանքներ նվիրված մրցույթ-վիկտորինաներին, որոնք կնպաստեն երեխաների մտավոր զարգացմանն ու դաստիարակությանը, կօգնեն երեխային տալ ցանկացած հարցին լուծում:

Գլուխ 1. Երաժշտական խմբային աշխատանքները որպես երեխայի համագործակցային ուսուցման կարևոր գործոն

Նախադպրոցական հաստատություններում ամենատարածված պարապմունքը տիպային երաժշտական պարապմունքներն են, որոնց բովանդակությունը հանդիսանում է երգերի կատարում, վոկալ և նվագարանային ստեղծագործությունների ունկնդրում, երաժշտառիթմական շարժումներ, նվագ մանկական նվագարաններով, հանպատրաստից ստեղծագործություն: Պարապմունքի համար նախատեսված նյութերը պետք համապատասխանեն երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին: Պարապմունքը կազմակերպելիս հարկավոր է առաջնորդվել մանկապարտեզի ծրագրի երաժշտական դաստիրակության բաժնի պահանջով:

Պարապմունքի բովանդակության մեջ ընդգրկվում են նոր և կրկնվող նյութեր. նորը կարող է լինել երգը, պարը կամ երաժշտության ունկնդրումը և դրա վերլուծությունը: Նպատակահարմար է ընդգրկել ծանոթ խաղերի և պարերի տարբերակներ, ստեղծագործական առաջադրանքներ: Հայտնի է, որքան հաճախ է կրկնվում այս կամ այն մատուցումը, այնքան ավելի հեշտ և որակով է ընթանում երաժշտական ստեղծագործության յուրացման գործնթացը: Սակայն այդ մեխանիկական կրկնությունը, անթույլատրելի է, քանի որ այն չի օգնում ուսուցմանը, այլ հակառակը, վատթարացնում է կատարման որակը:

Պարապմունքներն ըստ բովանդակության և կառուցվածքի ստորաբաժանվում են տիպային /ավանդական/, ունկնդրման պարապմունքներ, երաժշտառիթմական շարժումներ, ստեղծագործական ընդունակությունների զարգացում, մանկական նվագարաններով նվագ, թեմատիկ և համալիր պարապմունքներ:

Մանկապարտեզում երեխաների երաժշտական ուսուցման հիմնական ձևը երաժշտական պարապմունքներն են, ուստի պետք է դրանք կազմակերպել որոշակի մեթոդական պահանջներից ելնելով:

Երաժշտական դաստիարակության մեթոդներն ու հնարները կարելի է սահմանել որպես մանկավարժի փոխկապակցված գործունություն ամբողջություն, որն ուղղված է երեխաների երաժշտական ընդունակությունների զարգացմանը և երաժշտական մշակույթի ձևավորմանը: Երաժշտական դաստիարկություն պայմանավորված է այն հանգամանքով նաև թե գիտելիքներ ստանալիս ինչ աղբյուրներից են օգտվում երեխաները:

Բնական է, որ առաջին աղբյուրը հենց երաժշտությունն է. թերևս միայն նա է մարդու մեջ արթնացնում երաժշտական զգացումներ և հույզեր: Սկզբնական շրջանում երեխաների հետ տարվող աշխատանքի ժամանակ առավելությունը տրվում երաժշտության ունկնդրմանը և դրա միջոցով փորձի կուտակմանը: Որքան փոքր են երեխաները այնքան, երկար է տևում այդ շրջանը:

Գիտելիքների ձեռք բերման երկրորդ աղբյուրը մանկավարժի խոսքն է, որը երեխաներին տանում է երաժշտական կերպարի ամբողջական ընկալմանը և երաժշտական ստեղծագործությունների բովանդակության յուրացմանը:Ինչպես նաև պահանջների մեջ մտնում են նաև մանկավարժի խոսքը, որը երեխաներին տանում է երաժշտական կերպարի ամբողջական ընկալմանը,երեխաներին երաժշտական գործունությանը մասնակից դարձնելը: Առանց դրա և վարժությունների անհնար է՝ անհնար է երեխաներին մեջ երգի, պարի, խաղի, ունակություններ մշակել: Միայն պրակտիկ գործունությունը կարող է օժանդակել երեխայի բազմակողմանի զարգացմանը:

Երաժշտական պարապմունքներին կարելի է կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներից համագործակցային ուսուցումը: Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք դաստիարակության և ուսուցման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստը սաների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Դաստիարակները կարող ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Համագործակցային ուսուցման տարրերն են.

- դրական փոխկախվածության ապահովում.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթացի մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում:

Համագործակցային տեխնոլոգիայում կիրառվող մեթոդները և հնարներն են.

- Թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Պատկերասրահում
- Խմբային աշխատանք

Վերը նշված մեթոդներից և հնարներից նախադպրոցական հաստատությունների երաժշտական պարապմունքներին կիրառվում է խմբային աշխատանքը: Երաժշտական պարապմունքներին իրականացվում է ոչ միայն երեխաների գեղագիտական դաստիարակությունը, այլև այն հնարավորություն է տալիս զարգացնելու երեխաների մտավոր, բարոյական, մարդասիրական/հումանիստական/, հայրենասիրական դաստիարակությունը, լայն հնարավորություն էստեղծում ծանոթանալու մեր նախնիների պատմական փորձին: Երաժշտության պարապմունքները, խմբային աշխատանքները նպաստում են երեխաների բազմակողմանի զարգացմանը, օգնում նրանց մտածել, տրամաբանել, կշռադատել, մտքում ստեղծել կերպարներ և համեմատել, հետևել երաժշտության զարգացմանը, նպաստել նաև երեխաների մաթեմատիկական ունակությունների զարգացմանը:

Մտավոր դաստիարակության համակարգում առաջին պլան են մղվում գիտելիքների կիրառման, մտավոր գործունեության և ճանաչողական ակտիվության ընունակությունները, որոնք անհրաժեշտ է ձևավորել նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքից:

Մի շարք գիտնականների հետզոտությունների արդյունքները ցույց են տվել, որ նախադպորցականի և կրտսեր դպրոցականի մտավոր հնարավորությունները շատ ավելի բարձր են, քան թվում է առաջին հայացքից: Այս տարիքում երեխան ընդունակ է յուրացնելու և վերլուծելու երևույթների ինչպես ակնառու հատկանիշները, այնպես էլ

ներքին կապերն ու պատճառա-հետևանքային հարաբերությունները։ Մտավոր գործողությունների ձևավորման փուլային մեթոդիկայի կիրառման պայմաններում հնարավոր է այս տարիքում ձևավորել դեռահասին բնորոշ հասկացություններ։

Բնությունը բնական մարդուն շնորհել է միտք և գիտակցություն, մտավոր զարգացման, ստեղծագործելու և աշխարհին արարելու լայն հնարավորություններ։ Միտքը իմացության միասնական միավոր է, իր մեջ ներառող բոլոր հոգեկան, իմացական գործընթացների տարրեր։ Զարգացած միտքը հոգեկանի զարգացման որոշակի աստիճանն է։

Մտավոր զարգացումը իմացական գործունեության կայացման, իմացական ակտիվության գործընթաց է։ Իմացական ակտիվության դրսևորման ձևերն են՝ գիտելիքը, ընդունակությունները, հույզերը, միտքն ու խոսքը, կամքը և մտավոր գործունեության կարողությունները։ Մտավոր գործողությունների այն համակարգը, որը ծառայում է նախատեսված կոնկրետ խնդիրներին կամ խնդիրների լուծմանը կոչվում է մտավոր գործունեություն։ Այդ գործունեությունն ավելի բարդ գործունեություն է, այն պայմանավորված է մտավոր ընդունակություններով և մտավոր ներուժով։

Մտավոր զարգացումը պայմանավորված է երեխայի անհատական զարգացմամբ, միջավայրի ներգործությամբ, հատուկ կազմակերպված մանկավարժական աշխատանքով, սեփական փորձով։ Լ.Ս. Վիգոտսկին նշել է, որ բանականության /ինտելեկտի/ բուռն զարգացումը տեղի է ունենում նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում [4]։ Վաղ տարիքին բնորոշ է առարկայական մտածողությունը՝ 1. ակնառու գործնական, որին հետո փոխարինելու է գալիս 2. ակնառու-պատկերավոր մտածողություն։ Ավագ նախադպրոցական և կրտսեր դպրոցական հասակում ձևավորվում է խոսքով հիմնավորված 3. տրամաբանական-վերացարկման կարողությունները։ Մտածողության 4-րդ տեսակը ստեղծագործական և վերարտադրականն է։

Մտավոր դաստիարակությամբ է պայմանավորված երեխայի մտավոր զարգացումը։Մտավոր դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողի նպատակաուղղված, նպատակասլաց համատեղ գործունեություն է՝ սովորողների

մտավոր ուժերը զարգացնելու համար: Մտավոր դաստիարակության խնդիրները բազմազան են՝

1. Նախադպրոցականներին զինել կայուն և խոր գիտելիքներով, մտածական գործունեության հնարներով:

2. Զևավորել նրանց աշխարհայացքը:

3.Նրանց մեջ մշակել մտքի կայուն հատկություններ՝ մտքի լայնություն, խորություն և ճկունություն:

4.Անընդհատ համալրել նրանց գիտելիքները, ընդլայնել մտահորիզոնը:

5.Զևավորել նրանց բանական կարողություններն ու բանական գործունեությունը:

6.Կատարելագործել նրանց ուսումնական գործունեությունը:

Կրթության և դաստիարակության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դաստիարակության և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, անհրաժեշտ են այլընտրանքային նոր մոտեցումներ: Այդ խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը մանկավարժների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը դաստիարակների շրջանում և երկարատև պատմությունը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայություն ների բացակայությունը չէ: Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակիրց կրթության, դաստիարակության և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Դաստիարակներից շատերն են դուսուցման

ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում մանկապարտեզում կիրառվող. փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է: մեկ աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը դեռևս բավարար չէ: Դաստիարակներից պահանջվում է մեկ կամ երկամյա մասնագիտական վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է մանկապարտեզում պարբերաբար կիրառել ուսուցման և դաստիարակման հմտությունները, ուսումնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպես նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում ներգրավված դաստիարակների հետ:

ՈՒսումնասիրելով և յուրացնելով «Երաժշտության դաստիարակության» չափորոշիչը և ավագ խմբի ուսումնամեթոդական ձեռնարկը՝ մենք առաջարկում ենք մրցույթ-վիկտորինաներ, որոնք կնպաստեն երեխաների մտավոր զարգացմանն ու դաստիարակությանը, որի արդյունքում երեխաները ձեռք կբերեն ոչ միայն գիտելիքներ, այլ այդ գիտելիքները կկիրառեն խմբային գործունեության, մրցակցության մեջ, որը նրանց մեջ կառաջացնի ավելի շատ գիտելիքներ ձեռք բերելու ցանկություն: Մեր փորձարարական աշխատանքը անցկացվեց Վերին Արտաշատի «Լուսնթագ» մանկապարտեզի ավագ խմբում: Խմբային աշխատանքների ժամանակ նախապես ծանոթացրել ենք նվագարաններին՝ պատկերներին և անվանումներին, կոմպոզիտորներին և նոտաներին /թեև նոտաների ուսուցումը ներառված չէ ծրագրում, սակայն ընդհանուր պատկերացում կազմելու և բազմակողմանի զարգացնելու համար մենք կիրառում ենք/: Ստորև ներկայացնում ենք մրցույթ-վիկտորինայի պլանը:

Երաժշտական մրցույթ-վիկտորինա

Մասնակիցներ՝ երաժշտության դաստիարակ, երեխաներ, Դո, Ռե, Մի հնչյունիկները։

Երեխաները բաժանվում են խմբերի/թիմերի/՝ «Շեփորներ» և «Թմբուկներ»։

Վիկտորինան սկսում են ողջույնի երգերով։

Երաժշտության դաստիարակ. «Արվեստը մարդու ստեղծագործական գործունեության ձևերից է։Այն հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու կյանքը, ճանաչել աշխարհը, զգալ և տեսնել գեղեցիկը։ Արվեստի բազմազան տեսակներից յուրաքանչյուրն ունի իր լեզուն և արտահայտչամիջոցները»։

/Դո/ -Երաժշտությունն ու գրականությունը հնագույն ժամանակներից բարեկամացած, եկել , հասել են մեր օրերը։ Այսօր էլ արվեստի այդ տեսակները ջերմացնում են մարդկանց սրտերը, ներգործում նրանց հոգևոր աշխարհի վրա։

/Ռե/ -Ոչ մի այլ միջոց չի կարող ավելի լավ ու ավելի արդյունավետ խրախուսել կրթությունն ու լուսավորությունը, քան գեղեցիկ արվեստները՝պոեզիան, երաժշտությունը ր գեղանկարչությունը/Խ. Աբովյան/։

/Մի/ -Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին, և յր ոգևորություններով կենդանի շունչ է տալիս բանաստեղծությանը, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի՛, դրա համար թևեր են հարկավոր, րսկ թևեր առնել նա կարող է միմիայն այն կախարդական աշխարհքում/Հ. Թումանյան/։

Առաջին փուլ, հարցեր թմբուկներին.

1. Ի՞նչ է երաժշտությունը և ինչի մրջոցով է այն արտահայտվում։

/պատասխան/- Երաժշտությունը արվեստ է, որն արտահայտվում է երաժշտական հնչյունների և մեղեդու միջոցով։

2. Ինչերի՞ վրա է հնչում երաժշտությունը։

/պատասխան/ - երաժշտական նվագարանների վրա։

3. Թվարկել մի քանի նվագարաններ։

/պատասխան/- դհոլ, դափ, շեփոր, շվի, դաշնամուր, քանոն և այլն։

Հարցեր շեփորներին.

1.Ի՞նչ է երգը և ինչերի միջոցով է այն արտահայտվում։

/պատասխան/ -Երգը բառերի և մեղեդու միասնությունն է, որը կատարվում է բառերի և երգային ձայնի միջոցով։

2.Քանի՞ խմբի են բաժանվում նվագարանները։

/պատասխան/-բաժանվում են 4 խմբի՝ լարային, փողային, հարվածային և ստեղնաշարային։

3. Ո՞ր նվագարաններով է կատարվում ժողովրդական երգ, երաժշտությունը։

/պատասխան/-ժողովրդական նվագարաններով։

Ավարտվում և ժյուրիի և երաժշտության դաստիարակի կողմից ամփոփվում և գնահատվում է առաջին փուլի արդյունքները, որի ընթացքում երաժշտական մրցույթ-դադար է հայտարարվում՝ ովքեր են լավ երգում։ Գնահատվում են նաև կատարումները, որից հետո սկսվում է երկրորդ փուլը.

Հարցեր թմբուկներին.

1.Ովքե՞ր են ստեղծում երգերը, երաժշտությունները։

/պատասխան/-երգահան, կոմպոզիտորները։

2.Թվել հայ կոմպոզիտորների անուններ.

/պատասխան/-Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Ալեքսանդր Սպենդիարյան, Ալեքսանդր Հարությունյան, Առնո Բաբաջանյան և այլն։

3.ՈՒնկնդրել ստեղծագործությունը, նշել բնույթը, տրամադրությունը/ուրախ, տխուր/։

Հարցեր շեփորներին.

1.Ովքե՞ր են հորինում դասական երաժշտությունը՝ օպերան, սիմֆոնիան, կոնցերտը։

/պատասխան/-կոմպոզիտորները։

2.Թվել դասական նվագարաններ։

/պատասխան/-ջութակ, թավջութակ, դաշնամուր, շեփոր, ալտ, կոնտրաբաս և այլն։

3.ՈՒնկնդրել ստեղծագործությունը, ճանաչել այն և կոմպոզիտորին։

Երրորդ փուլի միավորների ամփոփում , որի ընթացքում կլինի երաժշտական դադար, մրցող խմբերը հանդես կգան մրցութային պարերով՝ ով է լավ պարում, կգնահատվեն նաև խմբային պարերը։

Երրորդ փուլ՝ բլից հարցեր.

1. Ի՞նչ է պարը

2. Ի՞նչ է շվին

3.Ո՞վ է Կոմիտասը

4.Առաջին նոտան դոն է, իսկ վերջին նոտան…./սի-ն/

Ամփոփվում է նաև վերջին փուլը, նշվում հաղթող թիմը, խրախուսվում երեխաների աշխատանքը։

Նման վիկտորինա-մրցույթներում կարևոր է ներառել գործունեության բոլոր ձևերը՝ ունկնդրում, երգեցողություն, պար, նվագ, հորինում, ինչպես նաև կիրառել տարբեր դիդակտիկ պարագաներ։

Եզրակացություն

Այսպիսով՝ ավարտելով այս աշխատանքը՝ մենք հնարավորություն ունեցանք բացահայտել նորանոր ուղիներ ավագ նախադպրոցականների մտավոր դաստիարակությունը կազմակերպելու և զարգացնելու գործում խմբային պարապմունքների միջոցով՝ հիմնված համագործակցային ուսուցման վրա։ Միայն գիտելիքներ հաղորդելը դեռևս բավարար չէ մտավոր զարգացման և դաստիարակության գործում բարձր ցուցանիշների հասնելու համար։ Այն լիարժեք կհամարվի այն դեպքում, երբ կրի համակարգված բնույթ, համալրված լինի մտազարգացնող զանազան մրջոցներով, խթանող ուժ հանդիսանա հետագա աշխատանքների կազմակերպման համար, հիմնված լինի հետևողական, ամրապնդվող աշխատանքների վրա։ Նման մրցույթները և խմբային աշխատանքները հնարավորություն կտան չսահմանափակվել միայն ծրագրային պահանջներով, այլ նաև համալրել երեխաների գիտելիքները լրացուցիչ տեղեկություններով։

Համագործակցության վրա հիմնված ուսուցումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է։ Խմբերի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, ուստի զուտ առարկային առնչվող նյութեր յուրացնելուց բացի նրանք ձեռք են բերում նաև շփման հմտություններ։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. Ս. «Մանկավարժություն» /ուսումնական ձեռնարկ/ «Մանկավարժ» Երևան 2005

2. Ասատրյան Մ. «Դպրոցամուտը՝ սոցիալական նոր միջավայրի երեխայի հարմարվելու կենսափուլ: «Մանկավարժություն»-N7. ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային Ինստիտուտ, 2011:

3. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:

4. Կրուտեցկի Վ.Ա. «Մանկավարժական հոգեբանության հիմունքները»: Լույս հրատարակչություն.- Երևան, 1976:

5. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայա- թյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

6. Մարության Ս.Ս., Դալլաքյան Ա.Մ «Նախադպրոցական մանկավարժություն»/ուսումնական ջեռնարկ/- Եր., «Գասպրինտ» 2005

5. Մկրտչյան Շ.Շ., <<Երաժշտությունը մանկապարտեզում>>, Երևան, <<Լույս>>, 1991թ. 304 էջ

7. Մկրտչյան Շ.Շ., <<Երաժշտությունը մանկապարտեզում>>, Երևան, 2007թ.

8. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանա- կակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:

9. Гогоберидзе А. Г. , Деркунская В. А. Музыкальное воспитание детей раннего и дошкольного возраста современные педагогические технологии-Ростов на/ Д; Феникс 2008-430с

10. Гончарова О. В . Богачинская Ю. С. Теория и методика музыкалного воспитания: - М.: Академия – 2014. 256с.

11. https://znanio.ru/media/---2614967?ysclid=lqe4ieo8fu689929710

Հավելված